

եւ անդէն ընդ սուր հաներ զամենեսեան. բայց միայն միաձի մազապուր ճողպրէր թագաւորն Շապուհ, փախուցեալ անկաներ յաշխարհն Պարսից: 20 Ապա յայնմ ժամանակի յերիցունց գնդացն միմեանց դիպէին աւետաւորքն յաղթութեանցն. բայց ի Բագոսէ, զի մեռաւ միայն ի միում ճակատուն, այլ եւ ոչ մի ի նոցանէն ոչ ծախէին. յԱստուծոյ եղել մեծ աջողութիւնն յաղթութեանն: 21 Եւ սոքա ի կողմանս Պարսից ասպատակէին, եւ հարկանէին մինչեւ ի կողմանս՝ որ կոչին Խարտիզան: 22 Եւ լցան գանձիւք բազմաւք եւ զինու եւ զարդու եւ բազում աւարաւ եւ անչափ մեծութեամբ, եւ հարստացան անցին ըստ չափ:

ԳԼՈՒԽ ԻԳ.

1 Յաղագս Մերուժանայ Արծրունոյ, որ ապստամբեաց յարքայէն Յայոց Արշակայ, եւ անկաւ առ թագաւորն Պարսից Շապուհ, եւ առաւել գրգռէր զպատերազմունսն. եւ թէ զհա՛րդ ուրացաւ յԱստուծոյ, եւ կամ զհա՛րդ եղել խոչընդակն եւ խոչոտն երկրին Յայոց մինչեւ յապայ:

2 Յայնմ ժամանակի ապստամբեաց յարքայէն Յայոց մի ոմն ի Նախարարաց մեծամեծացն, Մերուժան անուն Արծրունի. եւ չոգաւ եկաց առաջի թագաւորին Պարսից Շապուհ, եւ դներ ընդ նմա ուխտ երդմամբ, զի յաւիտեան ծառայ լիցի նմա: 3 Նախ ուրացաւ ի կենացն իւրոց՝ զոր յԱստուածն ուներ. զի եթող զաւրէնս քրիստոնէութեան, եւ խոստովան եղել վասն անձին իւրոյ՝ թէ չեմ քրիստոնէայ. եւ կալաւ զաւրէնս մազդեգանցն, այսինքն զմոգուցն. եպագ երկիր արեգական եւ կրակի, եւ խոստովան եղել՝ թէ աստուածք այն են՝ զոր թագաւորն Պարսից պաշտէ: 4 Եդ ուխտ ընդ Շապուհոյ արքային Պարսից յայնմ հետէ. Թէ իցէ եւ կարասցէ յաղթել Շապուհ Յայոց, եւ ունել զաշխարհն, եւ ինձ դարձ լիցի յիմ աշխարհն եւ յիմ տունն, նախ ես՝ ասէ՝ շինեցից ատրուշան յիմում տանն սեպհականին, այս ինքն տուն կրակին պաշտելոյ: 5 Եւ կեանս եւ մահ դներ ընդ նոսա, խոստացեալ բանիւք եւ արդեամբք: 6 Եւ զգաւրսն Պարսից պատրաստէին առաւել եւս քան զառաջինն, եւ առաջնորդ ունէին զչարագործն Մերուժանն, ասպատակել յաշխարհն Յայոց: 7 Յանկարծաւրէն այրացաւեր զերկիրն Յայոց առնէին առաջնորդ Մերուժանաւ. զարս<sup>1</sup> տային ի կոխումն փղաց, եւ զկանայս ընդ ցից սայլից հանէին. առնուին կոտորէին զամենայն բնակիչսն վերնագաւառացն Յայոց:

8 Մինչ դեռ թագաւորն Արշակ ի կողմանսն ստորին գաւառացն յԱնգեղ տանն եր յուտեստ, զմիջնաշխարհն քանդեալ բրեալ զաւրքն Պարսից ասպականէին: 9 Ապա զաւրածողով լիներ Վասակ զաւրավարն Յայոց, եւ որ հա-

1 Յոր. գորս